Դրանէ, եւ եթէ հարկ լիցի՝ Պատրիարքունք ծանուսցեն առ Պաշտօնեայն արտաքին գործոց, և յետ այնորիկ տնօրինել զվարս ու պատշաճն։ Իսկ արտաքին պաշտօնեայն յաղագս բառնալոյ զբազմամեայ խռովութիւնս երկուց ազգաց, կոչեաց քանիցս զեկեղեցականս երկուց կողմանց, զի իրաւախոհ լինիցին։ և զկնի բազում բանից՝ Հայք թողին և 'ի բաց կացին 'ի խնդրոյ զոյգ սանդխոց, իսկ վասն մնացելոց հարցանել Արքայի, և նա հրամայեաց ըստ որոշման առեանին արդարութեան լինել հրովարտակ, եւ ըստ այնմ գործադրել։

Մինչդեռ Հայք պատաղեալ զայսոսիկ խնդրովք դեգերէին 'ի դրունս մեծամեծաց և յատեանս Տէրութեան, և խնդիրքն կարեւորք մերձ էին դատանել զլուծումն։ այլ միաբանք Ցունաց արագեցին եւ կանխեցին այլ իմն չփոթութեամբ խափանել զայն և կապել 'ի կնճիռն անլուծանելի։ դիմեցին մեծամեծ պատարագօք առ Կուսակալն Սիդոնի (Սայտայ Վալիսի) Էսատ Փաշա, եւ բամբասանս բարուրանաց եդեալ՝ մեծամեծ գանկատանօք ամբաստան եղեն զՊատրիարքէն եւ զմիաբանութենէ Հայոց։ թէ որպէս յանդգնեցան առանց Բարձրագոյն հրամանի կախել զկանթեղս յեկեղեցին Բեթղեհէմի։ բանալ զպատուհանս, առնուլ զբանալի արտաքին դրան, և 'ի սիւնազարդ սրահէ եկեղեցւոյն իջուցանել զկանթեղս Ցունաց, այլովքն հանդերձ։ Եւ նորա զիջեալ 'ի կամս նոցա դրեաց առ Դատաւորն և առ մեծամեծս Երուսաղէմի։ իջուցանել զկանթեղս Հայոց, չբանալ և չփակել զպատուհանս, և զաւել ածելն վերստին յանձնել Ցունաց, և 'ի սիւնազարդ սրահն վերստին կախել զկանթեղս։ Ի հասանել այսր հրամանի յԵրուսաղէմ, որսացին Ցոյնք զմիտս Դատաւորին և մեծամեծաց։ գնացին բազմութեամբ 'ի Բեթղեհէմ։ բարձին զկանթեղս 'ի շղթայիցն Հայոց, եւ կախեցին զկանթեղս Ցունաց 'ի սիւնազարդ սրահն եւ խափանեցին զոր միանգամ կարգաւորեալ էր հրովարտակաւ Արքայի։ եւ պատուէր եռուն Հայոց չլինել ձեռներէց յիրս ինչ 'ի պատճառս որ և իցէ իրաց։ Այս հակառակ և անակնուելի հրաման Կուսակալին առիթ եղեւ միաբանացն Հայոց դառն վշտաց եւ տխրութեան, այլ ոչ եղեն յուսակտուր միան-